ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՞ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է Հայաստանում գահ բարձրացել Հռոմի դրածո Տիգրան VI–ը.

1) 58 թ.
2) 59 թ.
3) 60 թ.
4) 61 թ.

2 Ե՞րբ է Սիսը դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք.

1) 1151 թ.
2) 1169 թ.
3) 1173 թ.
4) 1175 թ.

3 Ե՞րբ են հնչակյանները հիմնադրել իրենց պաշտոնաթերթը.

1) 1888 թ.
2) 1889 թ.
3) 1890 թ.
4) 1887 թ.

4 Ե՞րբ է Հովսեփ Օրբելին նշանակվել Արմֆանի նախագահ.

1) 1938 թ.
2) 1943 թ.
3) 1935 թ.
4) 1937 թ.

5 Մինչև ե՞րբ է Ուրարտուն հիշատակվում ասուրա–բաբելական արձանագրություններում.

1) Ք. ա. VI դ. առաջին կեսը
2) Ք. ա. IV դ. առաջին կեսը
3) Ք. ա. V դ. առաջին կեսը
4) Ք. ա. V դ. երկրորդ կեսը

6 Ե՞րբ է Բարգեն Ա–ն գումարել Դվինի եկեղեցական ժողովը.

1) 554 թ.
2) 504 թ.
3) 545 թ.
4) 506 թ.

7 **Ո՞ր թվականներին է հրատարակվել «Գիտական շարժում» առաջին գիտական հայ պարբերականը.**

1) 1878–1885 թթ.
2) 1885–1887 թթ.
3) 1885–1889 թթ.
4) 1883–1885 թթ.

8 **Ե՞րբ է Հայաստանում գործարկվել էլեկտրոնային արագացուցիչը.**

1) 1959 թ.
2) 1976 թ.
3) 1967 թ.
4) 1957 թ.

9 **Մոտ քանի՞ մարտիկ է եղել հայկական 6 գումարտակներում 1917 թ. սկզբին.**

1) 6500
2) 5500
3) 6000
4) 5000

10 **Ո՞վ է Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին հայ հերոսը.**

1) Կարապետ Սիմոնյանը
2) Նելսոն Ստեփանյանը
3) Լազր Չափչախյանը
4) Հունան Ավետիսյանը

11 **Որտեղի՞ց է սկիզբ առնում Արևմտյան Տիգրիսը.**

1) Հայկական Տավրոսից
2) Ծաղկավետ լեռներից
3) Ծովք լճից
4) Ծաղկանց լեռներից

12 **Մանվել Մամիկոնյանի հրամանով ո՞վ մահապատժի ենթարկվեց.**

1) Բատ Սահառունին
2) Մերուժան Արծրունին
3) Վահան Մամիկոնյանը
4) Վասակ Սյունին

13 **Ո՞ր զինվորական ակադեմիայում է սովորել Հովսեփ Էմինը.**

1) Վուլվիչի
2) Փարիզի
3) Մոսկվայի
4) Մադրասի

14 **Ո՞վ էր Վանի թագավորությունում զինված ուժերի գերագույն հրամանատարը.**

1) առաջին սպարապետը
2) թագավորը
3) սպարապետը
4) կուսակալը

15 **Անանիա Մոկացի կաթողիկոսը Աղթամարից ո՞ւր տեղափոխեց կաթողիկոսական աթոռը.**

1) Անի
2) Բագարան
3) Արգինա
4) Կարս

16 **Որտե՞ղ է ստեղծվել «Հայրենասերների միություն» խմբակը.**

1) Երևանում
2) Վանում
3) Թիֆլիսում
4) Մոսկվայում

17 **Ո՞վ է արտահայտել հետևյալ տեսակետը.**

Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասել է. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

1) Աղասի Խանջյանը
2) Գրիգոր Հարությունյանը
3) Յակով Զարոբյանը
4) Ասքանազ Մռավյանը

18 **Ո՞վ է մեջբերման հեղինակը.**

«… Սանձահարել Ասորեստանի մոլեգնությունը և արգելել նրան ներխուժելու Նաիրյան երկրները. ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ»:

1) Ն. Ադոնցը
2) Ս. Գլինկան
3) Մ. Բրոսեն
4) Ն. Մառը

19 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
բ. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում հայոց թագավորի տիտղոսը հայտնի էր «Արքայից արքա» անունով:
գ. Դեռ Գավգամելայի ճակատամարտից առաջ Հայաստանում գոյություն ունեցող վարչական երկու մեծ միավորները կոչվում էին Մեծ Հայք և Փոքր Հայք:
դ. Արտաշատը Տիգրանակերտին և Ալեքսանդրիային կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
ե. Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում սկսված ժամանակաշրջանը հայտնի է «հելլենիստական» անունով:

1) բ, գ
2) բ, դ
3) ա, գ
4) ա, ե

20 **Արևմտահայ զորաբաժինը կյանքի կոչելու համար 1917 թ. ստեղծված գործադիր մարմինը կոչվել է՝**

1) Երևանի ազգային խորհուրդ
2) Հայոց ազգային խորհուրդ
3) Հայաստանի ապահովության խորհուրդ
4) Հայ զինվորական միություն

21 **Տրվածներից որո՞նք են արևմտահայերի սահմանադրական շարժման հետևանքներ.**

ա. Արևմտահայերը ստացան սահմանադրական ժողովի ընտրություններ անցկացնելու իրավունք:
բ. Ազգային սահմանադրությունը արևմտահայ բուրժուազիայի շոշափելի հաղթանակն էր:
գ. Ամիրաները զրկվեցին ազգային գործերը տնօրինելու մենաշնորհից:
դ. Այն դրական դեր կատարեց արևմտահայության հասարակական–քաղաքական կյանքում:
ե. Կանոնադրությունն ապահովեց արևմտահայերի անձի և գույքի պաշտպանությունը:

1) ա, բ
2) գ, ե
3) բ, դ
4) գ, դ

22 **Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.**

1) որովհետև պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել
2) որովհետև Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
3) որովհետև Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ
4) որովհետև պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը

23 **Թվարկված ճակատամարտերից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Ներսեհապատի
բ. Ձիրավի
գ. Ակոռիի
դ. Խաղխաղի
ե. Ճարմանայի
զ. Ոսխայի

1) բ
2) գ
3) դ
4) ե

24 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խորենացու «Հայոց պատմության» լույսընծայումը ռուսերենով Պետերբուրգում
բ. «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը Երևանում հեղինակի ներկայությամբ
գ. «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը
դ. «Ազդարարի» լույսընծայումը
ե. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի հրատարակումը
զ. «Բազմավեպի» լույսընծայումը

1) դ, գ, ե, ա, բ, զ
2) գ, դ, ա, բ, զ, ե
3) դ, գ, ա, բ, ե, զ
4) դ, գ, բ, ա, ե, զ

25 **XIX դ. երկրորդ կեսի հայ պատմագիտության հայտնի դեմքերի անունները համապատասխանեցնել իրենց գործունեությանը.**

1. Ստեփանոս Պալասանյան
2. Հովսեփ Գաթըրճյան
3. Ալեքսանդր Երիցյան
4. Անտոն Գարագաշյան

ա. Գրել է բազմահատոր հայագիտական աշխատություններ, որոնցից ամենանշանավորներն են միջնադարյան Հայաստանի առանձին «աշխարհներին» նվիրված գործերը:
բ. Նրա «Քննական պատմութիւն Հայոց» ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև V դարի ավարտն ընկած ժամանակաշրջանը:
գ. Նրա հեղինակած «Տիեզերական պատմություն» երկհատորյակը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն է:
դ. Նրա «Պատմութիւն Հայոց» աշխատությունը շուրջ քառորդ դար որպես դասագիրք է ծառայել հայկական դպրոցներում:
ե. Նրա աշխատանքի գլուխգործոցը «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» երկհատոր ուսումնասիրությունն է:

1) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ
2) 1–դ, 2–գ, 3–բ, 4–ե
3) 1–դ, 2–գ, 3–ե, 4–բ
4) 1–գ, 2–ա, 3–բ, 4–ե

26 **Տարեթիվը համապատասխանեցնել Տիգրան Մեծի գրված երկրանվանը.**

1. Մարաստան	ա. Ք. ա. 84 թ.
2. Կորդուք	բ. Ք. ա. 93 թ.
3. Ասորիք	գ. Ք. ա. 94 թ.
4. Կապադովկիա	դ. Ք. ա. 92 թ.
	ե. Ք. ա. 87 թ.

1) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ
2) 1–ե, 2–գ, 3–ա, 4–բ
3) 1–ա, 2–գ, 3–ե, 4–դ
4) 1–ե, 2–բ, 3–ա, 4–դ

27 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ հայկական նահանգներում նահանգապետերը և գավառապետերը նշանակվելու էին ցարի կողմից։

բ. Սան Ստեֆանոյի պայմանագրով Բայազետը և Ալաշկերտը վերադարձվել են Օսմանյան կայսրությանը։

գ. Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը Բեռլինի վեհաժողովի վերջին օրը բողոք են ներկայացրել մեծ տերություններին։

դ. Հալեպի 1896 թ. համաձայնագրով Զեյթունում պետք է նշանակվեր ազգությամբ հայ կառավարիչ։

ե. Ադրիանուպոլսի պայմանագրով Ռուսաստանին են անցել Ախալքալաքը և Ախալցխան։

զ. Ըստ 1878 թ. Բեռլինի հաշտության պայմանագրի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվել է գրաված տարածքների փոխանակում։

1) բ, ե
2) գ, զ
3) ա, դ
4) գ, ե

28 **Ե՞րբ են հիմնվել թուրքական ռազմական ատյանները, որոնք դատական հետաքննության են ենթարկել «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներին.**

1) 1919 թ. հունվարին
2) 1920 թ. հունվարին
3) 1919 թ. հուլիսին
4) 1920 թ. հուլիսին

29 **Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը.**

1) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6–ին
2) Ք. ա. 68 թ. հոկտեմբերի 6–ին
3) Ք. ա. 69 թ. սեպտեմբերի 22–ին
4) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22–ին

30 **Ընդամենը քանի՞ հայ աքսորվեց ամբողջ Անդրկովկասից 1949 թվականին.**

1) 14 500
2) 15 500
3) 16 500
4) 19 500

31 **Հայոց իշխանի պաշտոնում ո՞վ է հաջորդել Ներսեհ Կամսարականին.**

1) Աշոտ Բագրատունին
2) Սմբատ Բագրատունին
3) Համազասպ Մամիկոնյանը
4) Գրիգոր Մամիկոնյանը

32 **Ո՞ր պատմիչն է գրել Մաշտոցի հետևյալ մտքի մասին.**

« …գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:

1) Մովսես Խորենացին
2) Կորյունը
3) Վարդան Արևելցին
4) Ղազար Փարպեցին

33 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**
«Այո՛, գիտե՛մ՝ պիտի մեռնիմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեմ»:

1) Գրիգոր վարդապետը
2) Արաբոն
3) Մարկոս Թաշճյանը
4) Գարուն Աղասին

34 **Փետրվարյան ապստամբության նախօրյակին բոլշևիկների կողմից իրականացվող քաղաքականությունը կոչվում էր՝**

1) նէպի
2) ռազմական սոցիալիզմի
3) ռազմական կոմունիզմի
4) զինվորական կոմունիզմի

35 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական արդյունքներ:**

ա. Տիրան արքայի քաղաքականության արդյունքում հաստատվեց հայոց կաթողիկոսական աթոռի ինքնուրույնությունը:
բ. Պապի բարեփոխումների արդյունքում հայոց բանակի թիվը հասավ մոտ հարյուր հազարի:
գ. Սահակ Պարթև կաթողիկոսի ջանքերի արդյունքում Վռամ IV-ը Կամսարականներին ու Ամատունիներին վերադարձրեց նրանց տոհմական տիրույթները:
դ. Մի խումբ հայ նախարարների և փառամոլ երեց Սուրմակի չարախոսության ու ամբաստանության արդյունքում Հազկերտը Խոսրով IV-ին զրկեց հայոց գահից:
ե. Վարդանանց պատերազմի արդյունքում Հայաստանը վերականգնեց իր փաստական անկախությունը և պահպանեց քրիստոնեական հավատքը:

1) ա, դ
2) բ, ե
3) բ, գ
4) գ, դ

36 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. խորհրդային զորքերի մուտքը Մեղրի
բ. Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումը
գ. Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը
դ. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն
ե. խորհրդային զորքերի մուտքը Սիսիան
զ. Վրաստանի ամբողջ տարածքում խորհրդային կարգերի հաստատումը

1) գ, զ, դ, ե, ա, բ
2) գ, զ, ե, դ, բ, ա
3) զ, գ, դ, բ, ե, ա
4) զ, դ, գ, ե, ա, բ

37 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. հռոմեա–պարթևական տասնամյա պատերազմի ավարտը
բ. Վաղարշ I Արշակունու՝ Պարթևստանում գահ բարձրանալը
գ. Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
դ. Ներոն կայսեր գահակալման սկիզբը
ե. Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռադամիզդի վտարումը
զ. Արշակ I–ի գահակալության սկիզբը

1) բ
2) ե
3) դ
4) գ

38 **Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների անվանումները համապատասխանեցնել դրանց հիմնադիրների անուններին.**

1. Տաշիր–Զորագետ	ա. Սմբատ
2. Սյունիք	բ. Գագիկ
3. Վասպուրական	գ. Գուրգեն
4. Վանանդ	դ. Մուշեղ
	ե. Աշոտ

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–ե
2) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
3) 1–ե, 2–գ, 3–բ, 4–դ
4) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ

39 **Թվարկվածներից որո՞նք Կիլիկյան Հայաստանում պայլի գործառույթներից չէին.**

1) արքայի անչափահասության դեպքում ամբողջ երկրի խնամակալությունը
2) օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելը
3) արքայի բացակայության դեպքում նրան փոխարինելը
4) արքունի կարգ ու կանոնի պահպանումը
5) անչափահաս թագավորի խնամակալությունը

40 **Թվարկվածներից որո՞նք են 1940–ական թվականների վերջին սփյուռքահայերի հայրենադարձության դադարեցման պատճառներ.**

1) ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
2) սառը պատերազմի ավարտը
3) քաղաքացիություն ստանալու հետ կապված բարդությունները
4) Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական վիճակի վատթարացումը
5) տնտեսական դժվարությունները
6) խորհրդա–թուրքական հարաբերությունների բարելավումը

41 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Վանի թագավորության դիցարանում կար 35 աստված և 35 դիցուհի:
2) Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Նեմրութ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:
3) Վանի թագավորության շրջանից մեզ են հասել ավելի քան 1500 մեհենագրային արձանագրություններ և մենանշաններ:
4) Հայոց դիցարանում եղել է դպրության աստված, որը ներկայացնում էր Տիրը:
5) Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվել 552 թվականի հուլիսի 11-ը:
6) Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայքի Դերջան գավառի Թիլ ավանում:

42 **Իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Հայոց կաթողիկոսական աթոռի փոխադրումը Հռոմկլա
2) Սարգիս Զաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը
3) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
4) Լևոն II–ի և Բոհեմունդ III-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սսում
5) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
6) Ամբերդ ամրոցի ազատագրումը հայ-վրացական զորքերի կողմից

43 **Առաջին աշխարհամարտի տարիների իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Դիլմանի ճակատամարտը
2) Համազասպի ջոկատի կողմից Խիզանի գրավումը
3) Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
4) Արարատյան գնդի կազմավորումը
5) Սարիղամիշի ճակատամարտը

44 **Փաստերը համապատասխանեցնել հայկական ազգային դիվիզիաների անուններին.**

Ա. 408–րդ հրաձգային դիվիզիա
Բ. 409–րդ հրաձգային դիվիզիա
Գ. 390–րդ դիվիզիա
Դ. 76–րդ լեռնահրաձգային դիվիզիա
Ե. 89–րդ հրաձգային դիվիզիա

1) Մարտական ուղին ձգվել է Մոզդոկից մինչև Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա:
2) Կազմավորվել է ՀՀ բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման արդյունքում:
3) Փակել է գերմանական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս Նովոռոսիյսկ–Տուապսե շրջանում:
4) Ղրիմ թերակղզու ազատագրման գործում ունեցած հերոսական մասնակցության համար շնորհվել է Թամանյան անունը:
5) 1942 թ. մարտի սկզբներին մասնակցել է Կերչի մարտերին:
6) Դիվիզիայի անձնակազմից 9 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

45.1. Հայ նախարարական համակարգը, չնայած խալիֆայության դաժան բռնություններին, պահպանվել էր, որի հողատիրական հիմքը կազմում էին Բագրատունյաց, Սյունյաց, Ամատունիների, Կամսարականների և Արծրունիների իշխանական տիրույթները:
45.2. Արմինիա փոխարքայության մեջ էին մտնում Հայաստանը, Վիրքը, բուն Աղվանքն ու Հյուսիսային Միջագետքը:
45.3. Արաբների տիրապետության շրջանում քրիստոնյաներին արգելված էր խաչերով ու սրբապատկերներով երթեր անել փողոցներում:
45.4. Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդել էր որդին՝ Տարոնի տեր Սմբատ Բագրատունին:
45.5. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:
45.6. Հայոց իշխան Եսայի Աբու–Մուսեի քաջարի զինվորները մոտ մեկ տարի անառիկ են պահել Քթիշ ամրոցը (Տող գյուղի մոտ):

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Պարսից արքայի և հռոմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:

բ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Խորագոյն Հայք»:

գ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:

դ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:

ե. Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին սեպուհներ:

զ. Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:

է. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր նաև «Մասն Մեծ Հայոց» անունով:

ը. Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:

թ. Քաղաքներում հարկահանությանը, առևտրին ու արհեստներին, շուկաներին հետևող պաշտոնյան կոչվում էր շահապ:

1) բ, գ, զ, թ
2) բ, դ, է, թ
3) ա, գ, ը, թ
4) ա, դ, զ, ե

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Արատտայի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:

բ. Հայաստանում հելլենիզմի երկրորդ փուլն ընդունված է անվանել «բուն հելլենիստական» անունով:

գ. Դարեհ I–ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

դ. Արգիշտի I–ի զորքերը հաղթարշավով հասել են Ալիշտու, այսինքն՝ Աղստևի հովիտ:

ե. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր ստրատեգոս:

զ. Արգիշտի I–ի զորքերը Զագրոսյան լեռներով հասել են մինչև Պարսուա, որը հետագայում կոչվել է Պարսկահայք:

է. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

1) բ, գ, ե
2) ա, դ, է
3) գ, դ, է
4) ա, բ, զ

48 **Թվարկվածներից որո՞նք են նէպի ձախողման և դրանից հրաժարվելու պատճառներ հանդիսացել.**

ա. պետության կողմից տարեցտարի մեծացող միջամտությունը երկրի տնտեսական կյանքին
բ. բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակական աճը
գ. բոնաճնշումների և հարկադրական կոլեկտիվացման քաղաքականությունը
դ. գների վերահսկումը, ձեռնարկությունների ինքնուրույնության սահմանափակումը
ե. ներկուսակցական պայքարն ու անհատի պաշտամունքի քննադատությունը
զ. կառավարման վարչահրամայական եղանակին անցում կատարելը
է. տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը
ը. ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակերպի վերակենդանացումը
թ. այլախոհական պայքարի աճը Հայաստանում

1) ա, գ, ե, ը
2) ա, դ, զ, ը
3) բ, դ, է, թ
4) գ, դ, զ, թ

49 **Թվարկվածներից որո՞նք են արտացոլում 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի անմիջական հետևանքները.**

ա. Ռուսական իշխանություններն արագորեն բնակեցրին Արևելյան Հայաստանը ռուս կազակներով:
բ. Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստանին:
գ. Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի տարածքները:
դ. Պատերազմի արդյունքները գոհունակությամբ չընդունվեցին արևմտահայերի կողմից:
ե. Պարսկական տիրապետությունից ազատագրվելու արևելահայության հույսերն իրականացան:
զ. Տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ պարսկական տիրապետության տակ, սկսեցին վերաբնակվել Արևմտյան Հայաստանում:
է. Պատերազմի ավարտից հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանները վերամիավորվեցին:

1) բ, գ, ե
2) բ, ե, է
3) ա, գ, զ
4) գ, դ, է

50 **Իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Երևանի բերդի գրավումը ռուսների կողմից
բ. Երևանի նահանգի հիմնումը
գ. պարսկահպատակ հայերի՝ Արևելյան Հայաստանում վերաբնակեցման սկիզբը
դ. թանզիմաթի հրապարակումը Օսմանյան կայսրությունում
ե. Ներսիսյան դպրոցի հիմնադրումը
զ. Հայոց եկեղեցու կանոնադրության հրապարակումը
է. արևմտահայության՝ ռուսական տերությանն անցած տարածքներում զանգվածային վերաբնակեցման սկիզբը
ը. գեներալ Ա. Ճավճավաձեի հրամանատարությամբ Բայազետի բերդի գրավումը
թ. Ի. Պասկևիչի գլխավորությամբ Հասան կալայի գրավումը

1) դ
2) զ
3) թ
4) է

51 **Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հողային բարեփոխման վերաբերյալ Արտաշես I–ի հրամանագրի հրապարակումը
բ. Մագնեսիայի ճակատամարտը
գ. Գավգամելայի ճակատամարտը
դ. հայազգի զորավարների գլխավորությամբ Անտիոքոս III–ի զորքերի արշավանքը Երվանդական Հայաստանի դեմ
ե. Աքեմենյանների գերիշխանության հաստատումը Հայաստանում
զ. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
է. Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
ը. Արտաշես I–ի կողմից վճռական հակահարված հասցնելը Անտիոքոս IV-ին
թ. Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II–ի դեմ Կյուրոս Կրտսերի ապստամբությունը
ժ. Ալեքսանդր Մակեդոնացու զորքերի անցումը Հելլեսպոնտոսը

1) ե, թ, ժ, գ, դ, բ, զ, է, ա, ը
2) ե, թ, գ, ժ, բ, զ, դ, ա, է, ը
3) թ, ե, ժ, գ, բ, դ, է, ա, ը, զ
4) ե, թ, ժ, գ, բ, դ, զ, է, ա, ը

52 **Իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Չալդրանի ճակատամարտը
բ. Կ. Պոլսի հայոց պատրիարքության ստեղծումը
գ. կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու կողմից գաղտնի խորհրդակցության հրավիրումը
դ. Նոր Ջուղայում հայկական տպարանի ստեղծումը
ե. Ամասիայի հաշտության կնքումը
զ. Ջհանշահի գահակալության ավարտը
է. Լվովում հայկական տպարանի հիմնումը
ը. Զաքարիա կաթողիկոսի եղբորորդի Սմբատի օծումը հայոց թագավոր
թ. Աբգար Թոխաթեցու փոխադրվելը Վենետիկից Կ. Պոլիս

1) ա
2) թ
3) գ
4) է

53 **Վանի թագավորության արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

1. Նրա օրոք տերության կառավարման ոլորտում համադաշնային կառավարման համակարգից սկսվեց անցում կատարվել կենտրոնացված պետության:
2. Նրան հաջողվեց բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ:
3. Նրա առաջնորդությամբ ստեղծվեց Վանի աշխարհակալությունը:
4. Նա է անցկացրել գրային բարեփոխումը Վանի թագավորությունում:
5. Նա կառուցել է 72 կմ երկարությամբ ջրանցք, որն օգտագործվում է մինչև օրս:
6. Նա Սևանա լճի ավազանում վերակառուցեց ամրոցներ և դրանք անվանակոչեց Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով:

ա. Մենուա
բ. Իշպուինի
գ. Սարդուրի II
դ. Սարդուրի I
ե. Ռուսա I
զ. Արգիշտի I
է. Ռուսա II

1) 1–ե, 2–դ, 3–զ, 4–բ, 5–ա, 6–է
2) 1–զ, 2–է, 3–զ, 4–բ, 5–ա, 6–ե
3) 1–դ, 2–է, 3–զ, 4–բ, 5–ա, 6–ե
4) 1–զ, 2–զ, 3–դ, 4–ա, 5–բ, 6–է

54 **Տրված պնդումներից որո՞նք են ներկայացնում 1920-1930-ական թթ. կրոնի և եկեղեցու նկատմամբ խորհրդային պետության վարած քաղաքականությունը.**

ա. Եկեղեցուն տրվեց գործունեության լայն ազատություն, և ուժեղ պայքար ծավալվեց անհավատների դեմ:
բ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո եկեղեցու շարժական և անշարժ գույքը թողնվեց նրա տնօրինությանը:
գ. ԽՍՀՄ իշխանությունների կարգադրությամբ փակված կամ ավերված մի շարք եկեղեցիներ 1930–ական թվականներին վերականգնվեցին և սկսեցին գործել:
դ. Ռուսաստանի սովյալ բնակչությանն օգնելու պատրվակով սկսվեց եկեղեցական գույքի և թանկարժեք իրերի բռնագրավումը:
ե. 1926 թ. հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի օրվա՝ ապրիլի 24–ի նշումը:
զ. Շարունակվեց ճեմարանի և հոգևոր դպրոցի գործունեությունը:
է. Պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում իշխանությունները փորձեցին օգտագործել «Ազատ եկեղեցական եղբայրությունը» կամ «Նոր եկեղեցին»:

1) բ, դ, է
2) ա, զ, ե
3) գ, ե, զ
4) դ, ե, է

55 **Թվարկված պայմաններից որո՞նք են ճիշտ արտահայտում Դամասկոսում կնքված հայ–արաբական դաշնագրի բովանդակությունը.**

ա. Հայաստանի ամրոցներում արաբները տեղակայելու էին իրենց կայազորները:
բ. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 25–հազարանոց այրուձի:
դ. Խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:
ե. Պարսիկների ներխուժման դեպքում նույնպես խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
զ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին պահվող հայոց այրուձին պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:
է. Խալիֆայությունն առնվազն հինգ տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:

1) բ, դ, զ
2) ա, դ, ե
3) ա, գ, զ
4) բ, ե, է

56 **Տրվածներից առանձնացնել երեք կետ, որոնք Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման ծրագրին չեն վերաբերում.**

ա. Պետերբուրգում ունենալ Հայաստանի կառավարության դեսպան
բ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան
գ. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը հռչակել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով
դ. Հայաստանում 20 տարի ժամանակով տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք
ե. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին
զ. Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն
է. Հայոց թագավորին ընտրել ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև օծել Էջմիածնում

1) ա, գ, է
2) բ, ե, զ
3) գ, դ, զ
4) բ, ե, է

57 **Կատարել համապատասխանեցում.**

1. Հայաստանի խորհրդի նախագահը
2. Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով Բեռլին և Վիեննա մեկնած հայկական պատվիրակության ղեկավարը
3. «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատարը
4. Փարիզի խորհրդաժողովում Ազգային պատվիրակության ղեկավարը
5. Կիլիկիայի հայկական ինքնավարության կառավարության ղեկավարը
6. Վրաստանում 1918 թ. հիմնված ՀՀ դիվանագիտական առաքելության ղեկավարը
7. Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու համար ստեղծված հանձնաժողովում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը

ա. Ալեքսանդր Բեկզադյան
բ. Սարգիս Մուսայելյան
գ. Ավետիս Ահարոնյան
դ. Ավետիք Սահակյան
ե. Համո Օհանջանյան
զ. Միհրան Տամատյան
է. Պողոս Նուբար
ը. Արշակ Ջամալյան

1) 1–դ, 2–ե, 3–ա, 4–է, 5–զ, 6–գ, 7–ը
2) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե, 5–զ, 6–բ, 7–ը
3) 1–դ, 2–ե, 3–բ, 4–է, 5–զ, 6–ը, 7–ա
4) 1–դ, 2–գ, 3–բ, 4–է, 5–ե, 6–ը, 7–ա

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը կոչվում է Հայոց ազգային համագումար:
2) Արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
3) Այն կարգախոսը, որով Արևմտահայերի 2–րդ համագումարում ընտրված գործադիր մարմինը առաջնորդվեց, կոչվում էր «Մեկ ազգ, մեկ հայրենիք»:
4) Հայաստանի խորհրդի կողմից 1919 թ. մայիսի 28–ին ընդունված փաստաթուղթը կոչվում էր «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»:
5) Էսէռները սոցիալ–դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներ էին:
6) Բոլշևիկներից Գորիսն ազատագրելուց հետո երկրամասը կառավարելու համար Գարեգին Նժդեհի անմիջական ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվեց Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ:
7) Հայ–ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
8) Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրում ձևավորված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
9) Մոսկվայում կնքված խորհրդա–քեմալական հակահայկական փաստաթուղթը կրում էր «Ռուս–թուրքական անկեղծ բարեկամության և սրտագին եղբայրության պայմանագիր» անվանումը:

59 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Ցեղասպանություն է կոչվում մեկ ազգի կամ կրոնական համայնքի միայն լիովին բնաջնջմանը նպատակաուղղված գործողությունը:
2) Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության տապալումից քիչ հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան կոմիսարիատ:
3) Գնդապետ Դանիել Բեկ–Փիրումյանի գլխավորած զորամիավորը կոչվում էր Սարդարապատի ջոկատ:
4) Հայկական հարցի «լուծմանը» թուրքերին մասնակից դարձնելու համար սուլթանը 1891 թ. ստեղծեց մոտ 30 հեծելագնդեր, որոնք իր անունով կոչվեցին համիդիե:
5) Թիֆլիսում 1917 թ. մարտին ստեղծված երկրամասի գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր ԱԺԴՀ-ի հատուկ կոմիտե:
6) Արամ Մանուկյանին Թիֆլիսից Երևան գործուղած և արտակարգ լիազորություններով օժտած մարմինը կոչվում էր Հայոց ազգային խորհուրդ:
7) Ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16–ի հրամանով Հայկական ճակատում կազմավորվող զորամիավորը կոչվում էր Կովկասյան կորպուս:
8) 1918 թ. գարնանը Արևելյան Հայաստանը և այլ տարածքներ նվաճելու համար ստեղծված 50–հազարանոց թուրքական զորամիավորումը կոչվում էր «Կարս»:

60 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը ուշ միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնաձիգ քաղաքականությունն էին:
2) Թորոս I–ի կողմից Մանդալեի որդիներին մահապատժի ենթարկելու պատճառը հայոց Գագիկ II թագավորի սպանությունն էր:
3) Միջնադարում ժառանգական նախարարական խոշոր հողատիրության կրճատման հետևանքով թագավորական հողատիրությունն աճեց և ամփոփվեց Միջնաշխարհում գտնվող ոստանում:
4) Թյուրք-սելջուկների երրորդ արշավանքի արդյունքում ամբողջ Հայաստանը հայտնվեց նրանց տիրապետության ներքո:
5) Թյուրք-սելջուկների տիրապետության հաստատման հետևանքով Հայաստանի տարածքում ստեղծվեցին Երզնկայի, Տևրիկի, Կեսարիայի և Ադանայի սելջուկյան իշխանությունները:
6) Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Զաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:
7) Եգիպտոսի 1337 թ. արշավանքի արդյունքում ավերվեցին Կիլիկիայի բոլոր քաղաքները՝ այդ թվում Սիսը:
8) 1441 թ. հրավիրված Էջմիածնի ժողովի հետևանքը Հայոց կաթողիկոսական նստավայրի տեղափոխումն էր Այրարատյան նահանգ:

61 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Կյուրոս Մեծի դեմ սկսված ապստամբությունների արդյունքում Աքեմենյան տերությունը բաժանվեց 20 սատրապությունների:
2) Կյուրոս Մեծի հակամարական ապստամբությանն աջակցելու դիմաց Տիգրան Երվանդյանը իշխանություն ստացավ նաև Կապադովկիայի, Վրաստանի և Ատրպատականի վրա:
3) Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստեցին հյուսիսից երկիրն ասպատակող սկյութները:
4) Վանի թագավորությունում ստրուկների թվաքանակը հիմնականում ավելանում էր բնական ճանապարհով, ինչպես նաև պարտքի դիմաց ստրկացման եղանակով:
5) Քանի որ Արտավազդ II–ը տեղեկացրել էր, որ չի կարող օգնական ուժեր ուղարկել Կրասոսին, ուստի վերջինս որոշեց պարթևներին ջախջախելուց հետո պատժել Արտավազդին:
6) Արտաշես II–ին ասպարեզից հեռացնելու պատճառը նրա շեշտված հակապարսկական կեցվածքն էր և դաշինքը պոնտացիների հետ:
7) Տիգրան III–ից հետո, առանց Հռոմի համաձայնության, գահ բարձրացավ Տիգրան IV–ը, և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:
8) Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II–ի դեմ ապստամբած Կյուրոս Կրտսերը տապալեց եղբորը և հռչակվեց Աքեմենյան նոր գահակալ:

62 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Հնչակյան կուսակցությունը միանում էր ՀՅԴ–ին:
2) 1890 թ. հունիսին Թիֆլիսում հույժ գաղտնի պայմաններում սկսվել է ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը:
3) 1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը հայտնաբերել է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը և բանտարկել շուրջ 70 մարդու:
4) 1882 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որին անձամբ հետևում էր սուլթան Աբդուլ Համիդ II–ը:
5) 1896 թ. Ժնևի համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվել է երկու թևի՝ սոցիալիստական և ազատական:
6) 1894 թ. «Դրոշակում» տպագրվել է ՀՅԴ ծրագիրը:
7) 1914 թ. ապրիլին Լ.Վեստենենկը նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Տրապիզոն), իսկ Ն.Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Բիթլիս):
8) Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ.Գիրսը և Գերմանիայի դեսպան Հ.Վանգենհայմը 1913 թ. սեպտեմբերի 10–ին Արևմտյան Հայաստանի համար կազմել են 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր:

63 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Վանա լիճը ծովի մակերևույթից ունի 1820 մ բարձրություն և չորս կղզի՝ Աղթամար, Կտուց, Լիմ և Արճեշ:
2) Հայկական լեռնաշխարհի հյուսիսից դեպի հարավ-արևելք ձգվում է Փոքր Կովկաս լեռնաշղթան. հաջորդաբար վեր են խոյանում Ջավախքի, Գուգարքի, Գեղամա, Արցախի և Զանգեզուրի լեռները:
3) Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից:
4) Թորգոմա տունը գտնվել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում:
5) Համահայկական առաջին թագավորության հզոր և կատարյալ մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայաստանից դուրս՝ հասնելով Կովկաս, Իրան, Հունաստան և այլ երկրներ:
6) Ք. ա. VI դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:
7) Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XV դ. խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ է դուրս եկել այդ երկրի թագավոր Խուկանան:
8) Տիգրան Երվանդյանը, ըստ հայկական ավանդության, վճռական պայքարում սպանել է Մարաստանի արքա Աժդահակին:

64 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Գեղարդավանքը կոչվում է նաև Այրիվանք, որովհետև եկեղեցական կառույցների մի մասը փորված է ահռելի ժայռի մեջ։
2) Միջնադարում կաթոլիկների հիմնած հոգևոր–մշակութային կենտրոններից հայտնի է Արտազ գավառում գտնվող Ծործորի դպրոցը։
3) Հին Ջուղայեցի հայ արվեստագետ Բոգդան Սալթանովը հաստատվել է Պետերբուրգում և մեծ դեր խաղացել ռուսական արվեստի զարգացման գործում։
4) Ներսես Շնորհալի կաթողիկոսի հեղինակած «Հայոց կանոնագիրքը» անդրադառնում է ամուսնա–ընտանեկան իրավունքի որոշ նորմերի։
5) Նոր Գետիկի վարդապետարանում է կրթություն ստացել նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին։
6) Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ են դրվել նաև բյուզանդական օրենքները, ինչպես նաև արաբական օրենքները՝ ասիզներ անվանումով։
7) Նշանավոր մատենագիր Ներսես Մշեցին 1180–ական թվականներին հիմնադրել է Աղբերց վանքի դպրոցը, որը Եսայի Նչեցու ռաբունապետության տարիներին հայտնի է դարձել Գլաձորի համալսարան անունով։

65 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
2) Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ-ում
3) Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
4) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
5) ԱՊՀ-ի ստեղծումը
6) «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
7) Մ.Գորբաչովի կողմից ԽՍՀՄ–ի նախագահի լիազորությունները կամավոր վայր դնելը
8) Հայաստանի Հանրապետության դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ
9) «Հարսանիք լեռներում» գործողության իրագործումը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցման ավարտը
2) Դվինի ամիրայության միացումը Բագրատունյաց թագավորությանը
3) Սենեքերիմ Արծրունու գաղթելը Սեբաստիա քաղաք
4) Հովհաննես-Սմբատի մահը
5) Ծումբի ճակատամարտը
6) Ապլղարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի ստրատեգոս
7) Անիի Աշոտաշեն պարիսպների կառուցումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ
2) մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
3) Բաբելոնի գրավումը Տիգրան Երվանդյանի գլխավորած զորքերի կողմից
4) հունական 10–հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
5) Բագարան սրբավայր-քաղաքի կառուցումը
6) զորավար Վահումիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
7) Երվանդ III–ի դառնալը Հայաստանի սատրապ

68 **Փաստերը համապատասխանեցնել աղբյուրներից մեջբերված խոսքերին.**

Ա. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
Բ. «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:
Գ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:
Դ. «Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:
Ե. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:
Զ. «Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

1) Սահակ Պարթևի խոսքերը Արտաշեսի գահընկեցությանը դեմ լինելու առիթով
2) Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումը
3) Արձնիի ճակատամարտը
4) Արշակունյաց թագավորության անկումը
5) Ավարայրի ճակատամարտը
6) Գագիկ II–ի պատասխանը Մոնոմախ կայսրին
7) 481 թ. Շիրակում հավաքված հայ նախարարների վճիռը

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Արցախի Վարանդա գավառում 6000 թուրք զինվորների ոչնչացումը
Բ. Չավնդուրի ճակատամարտում հայերի լիակատար հաղթանակը
Գ. Սյունիքի հայկական իշխանության ճանաչվելը պարսից շահի կողմից
Դ. Մխիթար սպարապետի դավադիր սպանությունը
Ե. Ավան և Թարխան հարյուրապետների պատվիրակության մեկնումը ռուսական բանակ
Զ. Շուշին գրավելու օսմանյան բանակի անհաջող փորձերը
Է. Սյունիքի ազատագրական ուժերի հաղթանակը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ

1) 1729 թ.
2) 1725 թ.
3) 1722 թ.
4) 1728 թ.
5) 1730 թ.
6) 1723 թ.
7) 1724 թ.
8) 1726 թ.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

70.1. Հայաստանում բազմակուսակցական համակարգը ներդրվել է անկախության հանրաքվեից առաջ:
70.2. Վերակառուցման քաղաքականության ընձեռած ազատության պայմաններում Արցախի հայությունը սկսեց ավելի համարձակ պայքարել ԽՍՀՄ–ի կազմից դուրս գալու համար:
70.3. Ըստ ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալիստական և իրավական պետություն է:
70.4. «Փարոս» թերթը գաղտնի կերպով հրատարակել է «Հայկական երիտասարդական միություն» կազմակերպությունը:
70.5. Հայաստանի անկախության հռչակագիրը հաստատում էր նաև Հայաստանի Հանրապետության վճռականությունը Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:
70.6. 1969 թ. ձևավորված ԱՄԿ ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որդեգրել էր «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով» ռազմավարությունը: